

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի 07.04.2014 թ. նիստի

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետ՝ Ա. Ղահրամանյանի
- ՀՀ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ա. Ղուկասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վարչության պետ՝ Վ. Մկրտչյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ Ա. Պողոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության պետ՝

Ա.Այվազյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի պետ՝

Վ.Աբրահամյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության

վարչության գյուղատնտեսության բաժնի

գլխավոր մասնագետ՝

Մ.Սարիբեկյանի

Գյուղատնտեսության աջակցության

Արմավիրի մարզային կենտրոնի տնօրեն՝

Լ.Ալեքսանյանի

ՀՀ Արմավիրի մարզի ցրտահարությունից տուժած համայնքների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2014 թվականի մարտի 30-ի տրևական ցրտահարությունից տուժած ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում ստեղծված իրավիճակի մասին

/ Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հերևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ դեռևս 28.03.2014թ. Արմավիրի մարզպետի մոտ կայացած խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էր նաև ՀՀ գյուղատնտեսության նախարար պարոն Ս.Կարապետյանը, արդեն քննարկվել էր

<<Սպասվելիք ցրտահարության հետևանքները մեղմելու նպատակով ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ>> հարցը և իրազեկ էր պահվել մարզի համայնքների ղեկավարներին 2014 թվականի մարտի 30-ին սպասվելիք ցրտահարության մասին: Սակայն աննախադեպ և փրկական ցրտահարության հետևանքները մեղմելուն ուղղված միջոցառումները ի զորու չեղան էականորեն ներազդել գյուղացիական տնտեսություններին պատճառվելիք վնասների ծավալները մինիմումի հասցնելու գործընթացում, որին անդրադարձ եղավ նաև Արմավիրի մարզպետի մոտ 04.04.2014թ. կայացած խորհրդակցությունում:

Մարզպետ Ա. Ղահրամանյանը միաժամանակ տեղեկացրեց, որ նախնական հաշվարկներով ցրտահարության հասցրած վնասը կազմում է շուրջ 6 մլրդ դրամ: Վնասվել են հարկապես ծիրանի, վաղահաս կեռասի, դեղձի և սալորի այգիները: Մարզպետը Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց նաև, որ պետությունը նախատեսում է 100 տոկոսով փոխհատուցելու ցրտահարությունից տուժած և հաշվառված 83 համայնքների այգեերերի հողի հարկը և 50 տոկոսով՝ ոռոգման ջրի վարձավճարը: Բացի այդ, << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ցրտահարությունից տուժած տնտեսությունների շրջանում իրականացվելու է վարձավորություն աշխատանքի դիմաց ծրագիրը՝ 50 մլն դրամի շրջանակներում, իսկ << գյուղատնտեսության նախարարությունը 32 մլն դրամ ընդհանուր արժողությամբ տարբեր տեսակի սերմեր է տրամադրելու այգեերերին՝ բանջարաբուսությանը կուլտուրաներ մշակելու համար: Մարզպետը հայտնեց նաև, որ կենտրոնական բանկը աշխատանքներ է իրականացնում բանկային համակարգի հետ կապված ֆինանսական խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ, որի ավարտից հետո առավել որոշակի կդառնան տուժած տնտեսություններին համապատասխան օժանդակություն ցուցաբերելու հնարավորությունները:

<< Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը ակնկալեց, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում համապատասխան ընթացակարգով և սեղմ ժամկետում կավարտվեն մարզի համայնքներում ցրտահարության հետևանքով մարզի գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը մարզային հանձնաժողովում քննարկելուց հետո համաձայնեցված ակտերը կներկայացվեն հանրապետական հանձնաժողով:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Առաջարկել ցրտահարությունից փրոժած համայնքների ղեկավարներին՝

ա/ թարմացնել ՀՀ Արմավիրի մարզպետի 17.02.2012 թ. N 60 որոշման 3-րդ կետի պահանջով համայնքներում ստեղծված արտակարգ իրավիճակների հեղուկացման ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների կազմերը՝ համայնքներում ցրտահարության պատճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները կատարելու գործընթացը սկսելու նպատակով,

բ/ համայնքային հանձնաժողովների ակտերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել համապատասխան նախարարությունների, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից մշակվող և փրամադրվելիք ակտերի ու տեղեկատվական նյութերի ձևաչափերին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝

 Մ. Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝

 Դ. Դավթյան